

## ՄԻ ՊԱՐՄԵՆԱՐ

«Եթ յուսացեալ ի Տէր յամենայն սրտէ քումմէ, եւ յիմաստութիւն քո մի հպարտանար» (Սուակի Սողոմոնի Գլ. Գ. համար 5): «Տիրոջմէն յուսայ բոլոր սրտովդ եւ յիմաստութեանդ համար մի հպարտանար»: Սողոմոն իմաստութիւն, Դաւիթ Մարգարեկի տղուն ամենէն դաստիարակչական խօսքերէն մէկն է: Ամէն մարդու կ'ուզէ ըսել, թէ երբ անձ մը քարի գործեր կը կատարէ, նիշգը կը դաստիարակէ եւ մոլորդին նիշդ նանապարհը ցոյց կու տայ, յստակ է որ իր մէջ գոյութիւն ունեցող իմաստութեան շնորհիւ կը գործէ: Սակայն անձը այդ իմաստութիւնը իր միջոցներով չէ ստեղծած, այլ Աստուած տուած է այդ շնորհը որպէս զի քարենպատակ ծառայութիւններու համար գործածէ: Ուստի սխալ է որ այդ անձը հպարտանայ իր ունեցած իմաստութեան համար: Եւ մանաւանդ կարծէ թէ իր միջոցներով ձեռք անցուցած է զայն եւ ինքն է լիակատար հեղինակը իր բոլոր վարած գործերուն:

Սուազին Թագաւորութեանց մէջ գրուած է. «մի պարծեսցի իմաստութիւն յիմաստութիւն իւր, եւ մի պարծեսցի հզօրն ի գօրութիւն իւր, եւ մի պարծեսցի մեծատունն ի մեծութիւն իւր, այլ այնու պարծեսցի որ պարծիցին, իմանալ եւ նանաչիլ զՏէր եւ առնել զիրաւունս եւ զարդարութիւն ի մէջ երկրի» (Սուազին Թագաւորութեանց Գլուխ Բ համար 10): Այսինքն, իմաստութիւնը պիտի չպարծենայ իր իմաստութեան համար, հզօրը պիտի չպարծենայ իր գօրութեան համար եւ մեծատունը պիտի չպարծենայ իր մեծութեան համար. այլ անով բող պարծենայ որ կարող է ըմբռնել եւ նանչնալ Տէրը՝ իրաւունեներ պաշտպանելու եւ արդար գործեր կատարելու համար: Երբ մտամոլոր վիճակի մէջ գտնուինք, մանաւանդ կորսնցնելէ յետոյ այն գօրաւոր զգացումները որոնք կը կարծէինք թէ ունեինք, եւ կ'ազդուինք ստեղծուած հոգեկան, մտային եւ մարմնային տագնապներէ եւ խոռվութիւններու պատճառով, մեր Տիրոց տուած իմաստութեան արբնութիւնը կը խնդրենք իմաստութիւն գործեր կատարելու համար: Կարեւոր օրինակ մըն է Սողոմոն իմաստութիւնը: Երբ ան, ըստ Աստուածաշունչի, թագաւոր եղաւ, Աստուծմէ միայն իմաստութիւն խնդրեց իր երկիրը յաջող կերպով կառավարելու համար: Զխնդրեց Շիւրական ոչ մէկ տեսակի հարստութիւն, երկարակեցութիւն եւ զեխ կեանք ապրելու կամք: Եւ Աստուած արբնցուց Սողոմոն թագաւորին մէջ գոյութիւն ունեցող բնածին իմաստութիւնը որպէս զի ան կարողանայ իր երկիրը եւ ժողովուրդը ղեկավարելու նպատակները իրագործել:

Սողոմոն իմաստութիւնի ընթացքը ամէն անձ նիշտ նանապարհին առաջնորդող կեցուածքն է: Եւ երէ մեր երկիրը եւ արտասահմանի ստացուածքները կառավարել կ'ուզենք, խոհեմութիւն է որ Սողոմոն իմաստութիւն նման իմաստութեան արբնութիւն խնդրենք Տիրոջմէն: Կրօնականը իր նամրուն մէջ, գիտնականը ու դաստիարակիչը իրենց նամրաներուն մէջ եւ շուկայի բոլոր տեսակի աշխատաւորները, նոյնիք կարեւոր որքան առանձնաշնորհեալ անձեր, իրենց նամրաներուն մէջ, կը կարօտին Աստուծոյ տալիք արբնութեան եւ իմաստութեան:

Թող չանդրադարձողները անդրադառնան որ միայն Աստուած է իմաստութեան պարգևիչը յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԿՈՄԻՏԱՍՍ ՎՐԴ. ՇԵՐՈՎԵՑՑԱՆ